

ԼԵԶՈՒՍԳՐԻՏԱԿԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ՝

Մինչև է. դար արաբները ընդհանուր պատմութեան համար աննշան մի ժողովուրդ էին, որ խումբ խումբ ապրում էին Արարիոյ տաք անապատում՝ կիսափայրենի գրութեան մէջ՝ 611 թուին Մուհամմեդ սկսեց քարոզել իսլամը և արաբների բաժան բաժան ցեղերը կրօնի միութեամբ միացած ու զօրացած՝ դուրս եկան աշխարհներ նուաճելու (632), ժամանակը չափազանց բարեպատեհ էր. յոյնները և պարսիկները իրար ջարդելով ուժասպառ էին եղած. քրիստոնէութեան մէջ երկպստակութիւն էր տիրում և արաբների թարմ ուժերին դիմադրելու համար խոշոր արգելիքներ չկային. ուստի կարծուածից էլ անելի շուտ եղան նուաճումները: Կարճ ժամանակում նուաճուեցան Ասորիքը, Պաղեստինը, Եգիպտոսը, Պարսկաստանը, սրբից յետոյ էլ Հայաստանը:

Առաջին արաբական բանակը սոք կուխեց Հայաստան 640 թուին և մինչև Դուլին յառաջացաւ: Այնուհետև սկսեց պատերազմների մի երկար շարք արաբների եւ յոյների միջև՝ Հայաստանի սրբապետութեան համար: 53 տարի տեւեցին այդ պատերազմները և վերջապէս 693 թուին արաբները պաշտօնապէս տէր դարձան Հայաստանի՝ մինչև Կովկասեան լեռնաշղթան: Քանիցս անգամ հայերը ապստամբեցին արաբների դէմ՝ թօթափելու համար կպատակութեան լուծը, բայց այդ պղտատմութիւնները բոլորն էլ անյախող անցան և վերջի վերջոյ նպաստեցին միայն մի բանի, այն է իրենց լուծը անելի ծանրացնելու: Հայերը վերջապէս համոզուեցան դրանում և այնուհետև լքուած՝ անաղբրուելով տարին կպատակութեան լուծը մինչև Թ. դար:

Թ. դարից սկսում է արաբական պետութեան քայքայումը, որի պատճառներն էին նախ պետութեան ընդարձակածաւալ տարածութիւնը՝ որ մէկ ձեռքի տակ կառավարել անկարող էր, երկրորդ՝ արաբ իշխանների և ամիրապետների մեղկութիւնը՝ որ զիջուած անբաւ հարստութեան արդիւնքն էր, երրորդ՝ կրօնական բազմաթիւ կերճուածները՝ որոնք ձեռացան մահմեդականութեան մէջ, չորրորդ՝ պետութիւնը կազմող ցեղերի և ժողովուրդների բազմազանութիւնը և հիւղեբորդ՝ իւրաքանչիւր երկրի վրայ նշանակուած էմիրների անդատական ձգտումները: Ապստամբութեան ընդհանուր ոգին սկսում է տիրել արաբական պետութեան ոչ միայն քրիստոնեայ այլ և մանաւանդ մահմեդական զօրանած ժողովուրդների մէջ: Այսպէս Ա.Ֆրիկէի արաբները կազմում են մասնաւոր իսլիստութիւններ, Նորասանում հիմնում է պարսկական Քահիրի պետութիւնը (820), Աֆղանիստանի մէջ Ասֆֆարինների պետութիւնը, որ Պարսկաստանի մեծ մասին տէր է դառնում: Նոյն ժամանակ Հայաստանում էլ Աշոտ Ա. ճարպիկ քաղաքականութեամբ ստանում է արաբներից թազաւորական տիրուղոս և հիմնում է Բագրատունեաց թազաւորութիւնը (885): Այս թազաւորութիւնը սկզբում հարկատու էր դեռ Դուլիում. բայց քիչ քիչ այս կախման կէտերն էլ ջնջուեցան և Հայաստանը կատարեալ անկախութիւն ձեռք բերաւ Աշոտի անմիջական յաջորդների օրով:

Հայերը երկրորդ անգամ յարաբերութեան տան արաբների հետ ժԲ. դարից սկսած: Արժրունեաց ու Բագրատունեաց թազաւորութեան անկման ժամանակ շատ հայեր գաղթեցին Կիլիկիա և քըլջով տեղական յոյների՝ հիմնեցին Կիլիկիոյ փոքրիկ իշխանութիւնը, որ Լեւոն Բ. ի ժամանակ մեծ ու զօրեղ թազաւորութիւն դարձաւ: Յառաջանալով դէպի Եփրատ ու դէպի Ասորիքի հիւսիսային կողմը՝ բնականաբար հայերը շփման մէջ պիտի մտնէին Հալէպի և Դամասկոսի արաբ սուլթանութեանց հետ: Շուտով սկսեց թշնամութիւնը հայ և արաբական իշխանութեանց միջև. Հալէպի, Դամասկոսի և Եգիպտոսի սուլթանները քանիցս անգամ արշաւեցին Կիլիկիա. հայերը գաշնակցելով թաթարների հետ յաջողութեամբ

(*) Եւրուսակաւորիճ՝ մեծամեծ հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործն (Դ. Գլուխ):

գիմագրեցին արաբներին և մինչև անգամ նուաճեցին Հալէպը, Դամասկոսը, Երուսաղէմը և մտադիր էին նոյնիսկ Եգիպտոս արշաւելու: Սակայն թաթարների դաշնակցութիւնը կէս զար միայն տեւեց և 1302 թուին թաթարները մահմեդականութիւն ընդունելով՝ բնականաբար այդ դաշնակցութիւնն էլ լուծուեց: Հայոց նախկին դաշնակիցները դարձան թշնամի և արաբների հետ միացած յարձակուեցան Կիլիկիոյ վրայ: Հայերը հետզհետէ թուլացան, Կիլիկիան մաս մաս նուաճուեց և վերջապէս 1375 թուին ամբողջովին ընկաւ Եգիպտոսի արաբների լծի տակ: Այնուհետև Կիլիկիան մնաց արաբ, թիւրքմէն և թուրք իշխանութիւնների ձեռքը, մինչև 1517 թիւը, երբ Ասորիքի, Պաղեստինի և Եգիպտոսի հետ Օսմանեցոց ձեռքն անցաւ:

Հայ-արաբական յարաբերութեանց այս համառօտ ամփոփումից երևում է որ այդ յարաբերութիւնները պէտք է բաժանել երկու մասի. առաջինը՝ արաբական տիրապետութիւնը բուն Հայաստանում, որ տեւում է է. դարի կէսից մինչև Ժ. դար, 250 տարի, և երկրորդ՝ Կիլիկիայում և Ասորիքում որ տեւում է դանազան հանգամանքների տակ ԺԲ. դարից մինչև այժմ, քանի որ այսօր էլ հայերը Ասորիքում՝ թէև Ֆրանսիական տիրապետութեան տակ, բայց ապրում են արաբների հետ ամենօրեայ յարաբերութեան մէջ: Ըստ այսմ էլ արաբական ազդեցութիւնը հայերին վրայ պէտք է քննել երկու գիրքից, բուն Հայաստանում, և Կիլիկիայում ու Ասորիքում:

Թէև Արաբները դուրս էին եկել մարգարէի պատուէրի համաձայն անհատատներին դարձի բերելու, բայց իօլումի քարուզութիւնը տեղի ունեցաւ և յաջողեցաւ միայն կռապալտ ու կրակապալտ երկրների մէջ: Այսպէս Պարսկաստան, Աֆղանիստան, Բելուճիստան, Հնդկաստան, Թուրքեստան, Կովկասի լեռնականները և Աֆրիկէի վայրենիները ընդունեցին իսլամութիւնը և իսլամութեան հետ արաբական գիրը, գրականութիւնը և քաղաքիթութիւնը: Մեր հարեան Պարսկաստանում այնպէս արագ յաջողեց իսլամ որ կրակապալտների փոքր մի խումբ միայն կարողացաւ փախել ու հաստատուել Հնդկաստանում, ուր մինչև այսօր շարունակում են իրենց գոյութիւնը

փարսի անունով: Մնացեալ ամբողջ ժողովուրդը մահմեդական դարձաւ: Պարսիկները մահմեդական դառնալով՝ իրենց հին կուլտուրային թշնամի դարձան և ոչ միայն ընթացին ատրուշանները, այլ և ամբողջ իրենց գրականութիւնը, գրքերը և նոյնիսկ պարսկական (պահլաւական) գրերը: Երանք ընդունեցին արաբական տառերը: Բացմաթիւ փոխառութիւններ արաբերէն լեզուից, այնպէս որ պարսիկերէնը այսօր արտաքուստ ամբողջապէս և ներքուստ կիսովին արաբական լեզու է:

Քրիստոնէայ ազգերը այսպէս չեղան արաբները ընդհանրապէս կրօնական հաւածանք չհանեցին քրիստոնէաների դէմ. կատարուած դէպքերը մասնակի բնոյթ էին կրում. այս պատճառաւ էլ այդ ազգերը քրիստոնէական կրօնի հետ միասին և նրա պատճառով կարողացան պահել իրենց լեզուն, գիրը, գրականութիւնը և քաղաքակրթութիւնը: Միայն այն քրիստոնէայ երկրները, ուր արաբները կամ ընդհանրապէս մահմեդականները հոծ բազում թիւամբ լցուեցին, չկարողացան դիմանալ և վերջ ի վերջոյ ամբողջապէս արաբացան. այսպէս Պաղեստինը, Ասորիքը, Միջագետքը և Եգիպտոսը:

Հայաստանը պատկանում է առաջին կարգի երկրներին, այսինքն նրանց՝ որոնք ընդհանրապէս զերծ մնալով կրօնական խռոչի հայածանքից և չունենալով իրենց մէջ արաբական խռոչը դաթիականութիւն, կարողացան պահպանել իրենց լեզուն, գիրը և գրականութիւնը: 250 տարիների այն շրջանը, երբ Հայաստանը մնաց արաբական իշխանութեան տակ, իր տեղութեամբ բաւական կարճ է շոտմէականից և շատ աւելի կարճ Պարսկականից: Որակի տեսակէտով էլ նա շատ յետ է ոչ միայն պարսկականից, այլ և արաբականից ու յունականից: Քրիստոնէութիւնից առաջ հայերը կրօնակիր էին պարսիկներին. քրիստոնէութեան ներմուծմամբ նրանք կրօնակիր դարձան ասորիներին և յոյներին, որոնց կուլտուրական ազդեցութեան, գրին ու գրականութեան ենթակայ էին՝ երկար ժամանակ, մանաւանդ երբ սեպհական ազդեցոյն գիր ու գրականութիւն չունէին: Մինչդեռ արաբները ժամանակ ազդպէս չէր: Ի հարկէ հայերը բացարձակապէս չէզոքացած չէին

արարներից. Հայաստանի մէջ կար արաբական իշխանութիւն և բանակ, զանազան քաղաքներում գտնուում էր արաբ գաղութականութիւն, այսպէս Ուլաթի շրջանում, Գուբնուս, աւելի հիւսիս Պարտունում, ուր ըստ արաբ աշխարհագիրների տեղական ընթացիկ լեզուներից մէկն էլ արաբերէնն էր: Եստ հայեր գիտէին արաբերէն լեզուն, յատկապէս նրանք որ Բաղդատ ու Դամասկոս մի քանի տարի գերի մնալուց ու նոյն կնի կաւատալը ուրանալուց յետոյ դարձել էին Հայաստան: Օրվանուհի Բագարտ Բագարտունի իշխանը, որ 835 թուին էլ-Մոսասսեմ ամիրապետից իշխանաց իշխան էր կարգուած Հայաստանում, այնպէս տիրապետում էր արաբերէն լեզուին, որ նանայ ասորի վարդապետը նրա խնդրանք ընծայում էր իրեն Յովհաննու աւետարանի մեկնութիւնը արաբերէն լեզուով, որ ինքն էր գրել նախ ասորերէն լեզուով և յետոյ Բագարատի համար վերածել արաբերէնի:

Այս բոլորով կանգեքձ հայոց կրօնական տարբերութիւնը, հայերէն գրի և գրականութեան գոյութիւնը և ազգային գիտակցութեան լայն ըմբռնումը մի մի թուով գարձան արաբական ազդեցութեան առաջ և հայերէնը չազդուեց նրանից այն չափով, որ չափով որ ազդուել է միւսներից: Չունենողով որ և է գրուածք այս շրջանի ժողովրդական լեզուով, մենք իսկապէս չգիտենք թէ հասարակ ժողովուրդի լեզուն որ չափով ազդուել էր արաբերէնից. բայց գիտենք գոնէ, որ գրական լեզուի վրայ այդ ազդեցութիւնը չափազանց աննշան է: Այսպէս նանայ ասորու Յովհաննու աւետարանի մեկնութեան մէջ, որ Բագարատ Բագարտունու խնդրանք նախ ասորերէն գրել է հեղինակը, յետոյ թարգմանել արաբերէնի և արաբերէնից էլ վերածուել հայերէնի (Թ. դար), տպ. Վենետիկ 1920, ծախքից ծախք ոչ մի արաբերէն փոխառութիւն չկայ: Նոյնպէս Յովհաննէս Ե. կաթողիկոսը, որ Թ. դարու կէսից մինչև Ժ. դարու առաջին քառորդի վերջն ապրած հեղինակ է (+ 925) և որ մտերի յարաբերութիւններ ունէր արաբ իշխանաւորների հետ, իր ամբողջ պատմութեան մէջ (տպ. Երուսաղէմ 1867, էջք 457) բարձ է ամուս միմիայն երեք արաբական բառ. սելլալ ալ-իֆ (էջ 123)՝ իբր Ոգբայ արաբ ոստիկանի

բերանից, կուրան (էջ 421) և մակուրան կուրան (էջ 314), որ թուի թէ արաբերէն է: Պէտք է ընդունել սակայն որ հասարակ ժողովուրդի լեզուն արանից շատ աւելի փախտութիւններ ունէր:

Արաբերէն լեզուի ազդեցութիւնը գրական հայերէնի վրայ երևում է ուրիշ կողմից: Բանասէրները արաբական ազդեցութեան են վերագրում այն ուսուցիկ, ճամարտակ ոճը՝ որ երևում է նոյն շրջանի հեղինակների գրութեանց մէջ: Իբրև օրինակ բերենք Յովհաննէս կաթողիկոսի պատմութիւնից երկու հատուած.

«Ձայսու ժամանակաւ անազին իմն յեզակարծում ժամու սաստիկ շարժմանց եղևոց ի գիշերի ի Գուբն քաղաքի, բազում սասանունն և սարսափունն և դղրուումն և կործանակներ զբնակչօք քաղաքին զհեղալ, հիմն ի վեր տապալէր: Վասն զի առհասարակ ի վայր փուռչեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն և գտունս ուսմկացն, իբրև զերկուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանիր: Այլ և զատուածաշէն եկեղեցիս կաթողիկոսարանին և զայլ ևս հաստահեղոյս վկայարանս դղրեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէին, որ զրեթէ իբրև զփապարս վրձուտս դերբկաց սարսափելի տեսողացն երեւիր: Այլ և հեղձամղձուկ յարկածածուկ հողաթաւալ հողահեղձոյց ստատկունն զհակոյտ բազմութեան, որ կարծբազոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ՝ յարգարէր զնա ի բազում ողբս և յաստօտարթօր կանամունս: Թողում սան զազգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կանանունն և ողբունն և աշխարունն գուժից ճշոյ և կանոյ և կառանոյ, և աղիողորմ ձայնք բերեցիկ գուսանաց և սևազգեսց կանանց և արանց վշտահար հեծութեամբ հագացելոց՝ մինչև յերկինս բարձրացեալ ասանէր: Իսկ զբազմութիւն զիականցն ոչ բաւեալ տալ գերեզմանացն, զբազումս ի վիւս և ի խորափիտս և ի դարափրկակ ընկեցեալ իննէին: Եւ այսպէս ահ բարկութեանն անափետ զամենսեանս աննէր՝ պաշարմամբ զազածեալ զմնացեալսն» (Գլուխ ԼԲ.):

«Եւ իբրև ի բաց երաւ ձմեռնային ձիւնախառաղէպ սառնամանեաց ցրտութիւնն, և զարնանային հարաւահողմն շնչեաց՝ զտեղին

փոխաբերեաց, ապա ոստիկանն Յուսուփ բազում երիվարս սրազարս սօսս և ահապարանոցս պատրաստեալ՝ բազմազան պըճնայամբար պարզուք և զինուք ոսկեսանձ ոսկենկար պանձուճանօք, այլ և թագ ևս յոսկելո սոփերայ կազմեալ, և ի նմա յելուզեալ յեռեալ վարսակալ մարգարտատող՝ սպազարդութիւնս, և այլևս ականս պատուականս, և բազում և երեկելի զգեստս արքունականս ոսկեճամուկս և շղաշտեռն հրաշանկարս միանգամայն առաքէ ի պատու մեծարանաց արքայոյ Սմբատայ: Այլ և Աշոտի երկոցու որդւոյ արքայն նորանշան իմն պատիւ յարգարեալ իբր օդապարիկ իմն երիվար գեղեցիկ զարդուք և զինուք և պերճապանոյճ երանգս զգեստուց և կամար ականակապ ընդ մէջ ածնալ, և կացուցանէ զնա իշխան, իշխանացս հայոց, Բայց և ևս ևս՝ որ զայս գրեցի, պատուեցայ պատուս սիրարբ յոստիկանէն զգեստուք՝ ըստ օրինակի մարգիս. և ջորի պանձուճարս ոսկեզօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ: Իսկ արքայի խրախ լեալ ի բարեձիր պարզևս նորա և ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ քաղաք մասնաբար յիւրօրէն ևս նմա ընծայէր բարեվայելուչ և շքնադատես և երեկելի զարգս հանդերձանաց և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց և ըմբակս և նուազս, և կամար ի համակ ոսկւոյ՝ գործ հոռոմայական ճարտարաց, յերանցս գունակ գունակ ապակւոյ, առաւել ևս տասնապատիկ յաւելուածով՝ քան զմիանգամայն իսկ ընկալեալն առ ի նմանէնս (Գլուխ Խ.):

Յովհաննէս կաթողիկոսից մի քիչ յետոյ ի թովմայ Արծրունին, որ լինելով Հայաստանի հարաւային արեւելեան կողմից՝ աւելի մօտիկ էր արաբական աշխարհին և աւելի ազդուած պիտի լինէր արաբերէնից: Ահա նմոյշներ նաև նրա լեզուից:

«Իսկ իբրև լոււս թագաւորն զայս գոյժ աղաղակի հասնել ի դուռն արքայի, մըրմառեալ իբրև գաւառիւճ և իբրև զարջ տարակուսեալ՝ վառեալ լինէր իբրև զբոց հնոցի, իբրև զալիս ծովու դիգեալ կուտամբ փըրփրեալ ծիրանագոյն արիւնանման, ուժգին զոյելով անդնգաքակ յուզմամբ իբրև զհեղեղատ յորդահոս ի ճայթմանէ կարկտահոս ամպոց, հրախառն տոչորմամբ եռացեալ

շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտան կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի, խնդրէր գտանել զհին իրացն եկելոցն առ նա գուժականացն» (Արծր. սպ. Պատկ. էջ 114):

«Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի միջ ի մէջ աշխարհակոյտ ամբօխի անուռն բազմութեանն, և հրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: Եւ կայր զյօնն պուտեալ, կոկոզարանէր լի յիսորտանօք, խրոխտայր և փնդատար, եռացուցանէր ի վեր մէջեր զգառակութիւն ժահահոտ մարձոյն շարժոյն վատախանուութեանն, սրտմտեալ անժուժկալ ի բարկութեանն շերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի, առանց վեր ի վերայ զնելոյ սփռել տարածանել ի կորուստ և յապականութիւն քաղմաց» (Արծր. էջ 154):

«Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ հայոց՝ աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցի պատահեալ միմիանց սահանախաղաց զղրկմամբ: Կիմնաւարժ տապալմամբ, ներքսագոյն երկիր թուլացեալ պնդափակաղխեալ սանտարբամտական սահմանին, բարկութեան հողոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակ անդնդաքակս զթնձարայտակ երկրի զկարծր և զժանրալիր անկշիւս անբարութիւն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մշեալ հանդէպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն նորուն ստի, յորում շահաստանն Գուրն մարզախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ ևս տուրեւառիկ վաճառականուութեամբ եւ ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ՝ զնա ի հիմանց տապալեալ բերանաբաց դժոխարար լայնեալ զբերան իւր՝ յողունց քան թէ սակաւուսաբար վիժել յանդունդս, որոց ոմանք և տունք նոցա գերեզմանք նոցին եղին: Գունակ կորխային բանակին յանդնգաքակ տունն զքնակութիւնն արարին, անխայեալ ի նինուէական սորղացեալ նախանդ ոչ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացուցն Դունայ, նաև տեղիք սքրութեանց տունք աղօթիցն զշարժման կիրս կրեալ, պատամբամբ որմաշարժ լինելով» (Արծր. էջ 230):

Վերջապէս տալիս ենք մի հատուած Սահակի և Մեսրոպի անանուն պատմութիւնից, տպ. Սոփերք, հտ. Բ. էջ 5-43, որ մեր կարծիքով գրուած է մօտաւորապէս 850 թուից առաջ:

«Այսպիսիս թերևս բարբառէին երանելի առաջնորդքն մեր. այսպիսի՞ ձայնն արձակէին վաճառականքն ամենտոտ. այսպիսի՞ թելադիր լինէին քարոզքն ճշմարտութեան, մշակքն հոգևորք, գործօնեայք գեղեցիկք, բեռնաբերքն շահաւէտք, հարսնածուքն երանելիք, փեսաւէրքն փառատուքն, առթօղքն արիակոտն, կոտուածքն պատուականք, վարդպետքն քաղցրուսոյցք, դայեակքն դիրահամբոյրք, դաստիարակքն գորովագութք, դպրապետքն բարեսէրք, հովիւքն քաջափառք, մատակարարքն երջանկացեալք, իմաստասէրքն մեծարգոյք, բարեբերքն բերկրալիցք, հասապարհորդքն ճոխացեալք, սիւնքն հաւատոյ, ամոլքն եկեղեցւոյ, արմատքն անմահութեան, քանոնքն արդարութեան, չափքն իմաստութեան, յարգարիչքն օրինաց, կիմնացուցիչքն հաւատոյ, արձանքն մարութեան, պսակքն պննութեան, զարդքն զգաստութեան, խահարարքն իմանալի, մատուակքն ցանկալի, բարձրացուցիչքն եկեղեցւոյ, մխիթարիչքն տրամեցելոց, սանձքն անզգամաց, փարթամացուցիչքն հաստացելոց, դաւանողքն ուղղափառութեան, հաստատիչք հաւատոց, նորոգողքն կարգաւորութեան, դարանակալքն իմաստութեան, պատմաբանիչքն փառացի Յիսուսի, ողբերգականքն զովելիք, որք խնդուութեան ոչ եղեն խրախակիցք, այլ տրամութեան ոչ վայելեցին ընդ բերկրալան, այլ զաւանուութեանն տխրեցան ընդ փառեալան. որք յանդորութեանն սլ էին զուարահակիցք, այլ ի թշուառութեան գտան չարաչարակիցք, որք ի զերամբարձութեանն ոչ գտան բարձրացեալք, այլ ի տառապանան զտառացեալք, որք ցնծութեանն ոչ գտան դասակիցք, այլ ողբոցն եղեն ձախակիցք» (էջ 24-26):

Պրոֆ. Հ. ԱՅՆՈՒՅԱՆ

(Շարունակելէ)

Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ

**ԷԶՏԻԱՄՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ
ԵՐՈՒՍԱԶԼԵՍ Ս. ԱԹՈՌՈՅ ՍԷԶ**

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր և Ս. Արքուդոյ Միաբանութիւնը ուրախութիւնն ունեցան հիւրընկալելու Յունիս 26ին, Ս. Էջմիածնի Մայր Արքուդոյ եւ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի պատուիրակները՝ յանձնիս Բրօժ. Առաջել Առաջելեանի եւ Ծիկոս դայոս Մանուկեանի: Մեծայարգ հիւրերը առաջնորդուեցան Պատրիարքարանի Դանիինը ուր կատարուեցաւ պատեան ընդունելութիւն: Ամեն Ս. Պատրիարք Հայրը՝ յանձնիս Արքուդոյ Միաբանութեան, բարի գալուստ մտղոցք Ս. Արքուդոյ բանկապին հիւրերուն, յայտնեց այն ուրախութիւնը որով համակուած են բոլոր Միաբանները, եւ բրաւ ստագին մարքաններ Ս. Էջմիածնի, Մայր Արքուդոյ պայծառութեան, Ն. Ս. Օձուրիւն Տ. Տ. Գեորգ Է. իմաստուն ու խոհական Հայրապետի արեւատութեան եւ ներկայ պատուիրակներու յաջողութեան համար: Ապա Մայր Արքուդոյ պատուիրակ յարգելի Բրօժ. Ա. Առաջելեան, խօսք առնելով հաղորդեց Նորին Ս. Օձութեան սիրալիւր ողջոյնները Նորին Ամենապատուութեան եւ իր գլխաւորած Միաբանութեան, եւ Հայրապետական մարքաններ Սրաւապիս Ս. Արքուդոյ հաստատութեան եւ պայծառութեան համար: Ապա խօսեցաւ Ս. Էջմիածնի Մայր Արքուդոյ, սնոր արժանւոյնի Գանաւալի իր արատաւմանի զարակներու նկատմամբ ունեցած սերեմ եւ պատեական այն մեծ դերեմ զոր ունեցած է Հայաստանայն եկեղեցին ամենուրեք: Սովբեական Հայաստանի բոլոր հաղաւթիները յարգանք միայն ունին հանդէպ Մայր Արքուդոյ, որ վերջին պատերազմի ամենազմուղակ օրերուն չդադրեցաւ հայրենասիրութեան ձայնը ըլլալ իր գաւակներէն իւրաքանչիւրին:

Բարի գալուստի պատեանական այս արտադրութենէն ու արտայայտութիւններէն ետք, միաբան վարդապետներ առանձնաբար յայտնեցին իրենց խնդակցութիւնը պատուիրակներուն, ու մեկնեցան, յարգելի հիւրերը ձգե-